

կայցեն եւ խափանել ջանայցեն, որպէս զազգն թուրքաց. եւ թէ ոչ՝ որ յանդգնութիւն արասցեն եւ հակառակեացին հրամանաց իմոց եւ ոչ կամեսցին լսել ինձ, օ՛ն եւ օն արասցէ Տէր եւ օ՛ն եւ օն յաւելցի, եթէ զայնպիսիս ոչ բնաջինջ եւ ազգաջինջ ոչ առնիցեմ եւ կորուսանիցեմ զյիշատակս նոցա յերկրէ»:

Անշուշտ օգտուելով Շահին բարեհաճ տրամադրութենէն կարող էր խոճայ Նազար առաջարկել, որ էջմիածնի կաթողիկոսութիւնը փոխանցուէր Մովսիսի. բայց նպատաւոր չէր ժամանակը, երբ Սահակ նոր էր ստացած իւր հաստատութեան հրամանագիրը Շահէն, եւ դարձեալ ծանրաբեռնուած էր աթոռը պարտքերով: Առ ժամն կարելոր էր հանել էջմիածինը աւերակ վիճակէն, որ սրտցաւութիւն կը պատճառէր ամէնդուն. իսկ առ այս բաւական էր, եթէ անոր լուսարարութիւնը լայն իրաւունքներով յանձնուէր Մովսէսին:

«Մեծաւ փառօք եւ անպատում ցնծութեամբ» մեկնեցաւ Մովսէս Փահրապատէն եւ հասաւ Երեւան: Ըստ Դարանաղցոյ (295) նաեւ Ամիրզոյնա խան նոյնիմաստ թուղթ տուաւ իրեն եւ ամէն ազատութիւն ըստ հրամանին գործելու: Բայց այս միջոցին վախճանած էր Ամիրզոյնա խան. խօսքը հաւանօրէն անոր յաջորդի Թահմազդուլի խանի մասին իմանալու է: 1627ի Վարդապառի պա-